ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.	Անունը, ազգանունը. **Արմեն Ղազարյան**
2.	Զբաղեցրած պաշտոնը. **ՀՀ միգրացիոն ծառայության պետ**
3.	Գործուղման վայրը և ժամկետները. **2019 թվականի հուլիսի 25-27**
4.	Հրավիրող կողմը. **ՀՀ փոխոստիկանապետի գլխավորած պատվիրակության կազմում**
5.	Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). **Ավստրիական կողմի հետ վիզաների ազատականացման երկխոսության հնարավոր մեկնարկին ընդառաջ բանակցությունների անցկացում**
6.	Քննարկված թեմաները. **Այցի ընթացքում քննարկման հիմնական թեմաներն էին ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման երկխոսության հնարավոր մեկնարկը և այս համատեքստում ՀՀ-ԵՄ ռեադմիսիոն համաձայնագրի իրականացման ընթացքը:** **Միգրացիոն ծառայության իրավասությունների ոլորտի քննարկման հիմնական թեմաներն առնչվում էին ռեադմիսիոն էլեկտրոնային համակարգի գործարկմանը, անձանց նույնականացման խնդիրներին:**
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը. **Ավստրիայի արտաքին գործերի նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում այդ երկրի արտաքին քաղաքական գերատեսչության և ներքին գործերի նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ: Ավստրիական կողմը հիմնականում ներկայացվեց էր երկու գերատեսչությունների գործառնական բաժինների ղեկավարների մակարդակով, մասնավորապես ներկա էր նաև Եվրոպայի, ինտեգրման և արտաքին գործերի դաշնային նախարարության ապաստանի և ռեադմիսիայի հարցի բաժնի պետ Աքսել Վեխը:** **Հանդիպման ընթացքում հիմնականում քննարկվել են հետընդունմանն առնչվող հարցերը, մասնավորապես Ավստրիայի ՆԳ նախարարությունը նշել է ՀՀ միգրացիոն մարմինների հետ դրական համագործակցության արդյունքների մասին, իսկ հայկական կողմից նշվել է, որ Ավստրիայի ռեադմիսիայի դիմումների 2017-2019թթ. Ընդհանուր**

	առմամբ ստացել են միջինում շուրջ 70% դրական պատասխան: Միաժամանակ ավստրիական կողմը նշել է, որ վիզաների ազատականացման շուրջ ԵՄ-ի հետ երկխոսության մեկնարկի համար անհրաժեշտ է Եվրոպական հանձնաժողովի կողմից համապատասխան գործողություններ ու նախաձեռնություն: Ասվածին ի պատասխան՝ ՄԾ պետը նշել է, որ եվրոպական կառույցների, այդ թվում և Եվրոպական հանձնաժողովի կողմից առկա է համապատասխան մոտեցում, որ հայկական կողմը նախ որոշակի աշխատանք տանի անդամ-երկրների հետ երկկողմ ձևաչափով:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը. Հանդիպման ընթացքում որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել: Հանդիպման ավարտին ավստրիական կողմի ներկայացուցիչները շեշտել են, որ համապատասխան եվրոպական կառույցների կողմից Հայաստանի հետ վիզաների ազատականացման երկխոսության մեկնարկի հարցով դիրքորոշում ստանալու դիմումին ի պատասխան՝ պատրաստ են տրամադրել իրենց դրական կարծիքը՝ հաշվի առնելով առկա համագործակցության բարձր մակարդակն ու դրական դինամիկան:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները. Առաջարկվում է վիզաների ազատականացման մեկնարկին ուղղված գործընթացի աշխատանքները կազմակերպել առավել համակարգված ձևով, որի առնչությամբ համապատասխան առաջարկությունը կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:
10.	Ստորագրությունը, ամսաթիվը: 29.07.2019